Beth Israel Lahey Health
Winchester Hospital

Վարկերի և հավաքագրման քաղաքականության

Բովանդակություն

<u>Բաժին</u> **<u>Վերնագիր</u>**

Ա. Հիվանդի ֆինանսական ռեսուրսների և ապահովագրական ծածկույթի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրում

Բ. Հիվանդանոցային հաշվի դուր գրման և հավաքագրման պրակտիկա

Գ. Հավաքագրման գործունեությունից ազատված խումբ

Դ. Անհետաձգելի վատ պարտք

Ե. Հավաքագրման արտակարգ միջոցառումներ

Զ. Արտաքին հավաքագրման գործակալություններ

Է. Կանխավճարներ և ապառիկներ

Beth Israel Lahey Health
Winchester Hospital

Winchester Hospital Վարկերի և հավաքագրման քաղաքականություն

Winchester Hospital-ը, այսուհետև WH, հանդես է գալիս հավատարմատար պարտավորությամբ փոխհատուցում ստանալ վճարունակ հիվանդներին մատուցած ծառայությունների համար երրորդ կողմ հանդիսացող ապահովագրողներից, ովքեր ծածկում են հիվանդի խնամքի ծախսերը և այլ աջակցության ծրագրերից, որոնց իրավասու է հիվանդը: Որոշելու համար, թե արդյոք հիվանդը ունակ է վճարել մատուցած ծառայությունների համար, ինչպես նաև օգնել հիվանդին գտնել այլընտրանքային ծածկույթի տարբերակներ, եթե նրանք ապահովագրված չեն կամ թերի են անապահովագրված, հիվանդանոցը պահպանում է հաշվի դուս գրման և հավաքագրման հետևյալ չափանիշները: Հիվանդի և ընտանիքի անձնական ֆինանսական տեղեկատվություն ձեռք բերելիս հիվանդանոցը պահպանում է բոլոր տեղեկությունները՝դաշնային և նահանգային գաղտնիության, անվտանգության և անձը հաստատող փաստաթղթերի գողության օրենքներին համապատասխան:
WH-ը քաղաքականությունում կամ քաղաքականության դիմելու գործընթացում, որը վերաբերում է մինչ գրանցումը և բուժումը կատարված կանխավճարների, վճարման ժամանակացույցերի, հետաձգված կամ մերժված ընդունելությունների ֆինանսական տեղետատվության ձեռքբերմանը և հաստատմանը, Մասաչուսեթսի Medicaid-ի գրասենյակի կողմից հաստատված ցածր եկամուտ ունեցող հիվանդի կարգավիչակի հաստատման կամ հաշվի դուրս գրման և հավաքագրման գործընթացներում խտրականություն չի դնում՝ ելնելով հիվանդի ցեղից, գույնից, ազգային ծագումից, քաղաքացիությունից, օտարերկրացի լինելուց, կրոնից, դավանանքից, սեռից, սեռական կողմնորոշումից, սեռական ինքնությունից, տարիքից կամ հաշմանդամությունից կամ ներգաղթյալի կարգավիճակից:

Վարկերի և հավաքագրման քաղաքականությունը վերաբերում է Winchester Hospital-ին և ցանկացած իրավաբանական անձի, որը հիվանդանոցի լիցենզիայի կամ ՀՎՀՀ-ի մաս է:

Ա. Հիվանդի ֆինանսական ռեսուրսների և ապահովագրական ծածկույթի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրում:

ա) WH-ը կաշխատի հիվանդի հետ՝ նրան հաղորհելու հետևյալ հիմնական տեղեկատվությունը տրամադրելու իրենց պարտականության մասին.
Առողջապահական որևէ ծառայություն մատուցելուց առաջ (բացառությամբ այն ծառայությունների, որոնք տրամադրվում են շտապ օգնություն կամ շտապ օգնության կարիք ունեցող հիվանդի վիճակի կայունացման համար), հիվանդը պարտավոր է ժամանակին և ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել իր ընթացիկ ապահովագրական կարգավիճակի, վիճակագրական տվյալների, նրա ընտանեկան եկամտի փոփոխություններ կամ խմբային ապահովագրության ծածկույթի վերաբերյալ (եթե այդպիսիք կան) և, եթե հայտնի է, նվազեցումների, և համավճարների վերաբերյալ տեղեկություններ, որոնք պահանջվում են իրենց կիրառելի ապահովագրության կամ ֆինանսական ծրագրի կողմից: Յուրաքանչյուրի մանրամասն տեղեկատվությունը պետք է ներառի, բայց չսահմանափակվի միայն.

i) Անունը, հասցեն, հեռախոսահամարը, ծննդյան ամսաթիվը, սոցիալական ապահովության համարը (առկայության դեպքում), առողջության ապահովագրության ընթացիկ տարբերակները, քաղաքացիության և բնակության մասին տեղեկությունները, և հիվանդի կիրառելի ֆինանսական ռեսուրսները, որոնք կարող են օգտագործվել հաշիվը վճարելու համար

ii) Անհրաժեշտության դեպքում՝հիվանդի երաշխավորողի անունը, հասցեն, հեռախոսահամարը, ծննդյան ամսաթիվը, սոցիալական ապահովության համարը (առկայության դեպքում), առողջության ապահովագրության ընթացիկ տարբերակները և դրանց կիրառելի ֆինանսական ռեսուրսները, որոնք կարող են օգտագործվել հիվանդի հաշիվը վճարելու համար և

iii) Այլ միջոցներ, որոնք կարող են օգտագործվել հաշիվը վճարելու համար, ներառյալ այլ ապահովագրական ծրագրեր, ավտոտրանսպորտային միջոցների կամ տան ապահովագրության պայմանագրեր, եթե բուժումը տեղի է ունեցել դժբախտ պատահարի

արդյունքում, աշխատողների փոխհատուցման ծրագրեր, ուսանողների ապահովագրության պայմանագրեր և ցանկացած այլ ընտանեկան եկամուտ, ինչպիսիք են ժառանգությունը, նվերները կամ բաշխումների առկա այլ միջոցներից:

WH-ը կտեղեկացնի հիվանդին, որ ինքը պատասխանատու է իր չվճարած հաշիվը հետևելու համար, ներառյալ առկա բոլոր համավճարները, համապահովագրումը և նվազեցումները, և կապվել հիվանդանոցի հետ, եթե հաշիվը վճարելու համար օգնություն հարկավոր լինի: Հիվանդից նաև պահանջվում է տեղեկացնել կամ իր ներկայիս առողջության ապահովագրողին (եթե այդպիսիք կան) կամ պետական գործակալությանը, որը հանրային ծրագրում որոշել է հիվանդի իրավասության կարգավիճակը, ընտանեկան եկամտի կամ ապահովագրական կարգավիճակի ցանկացած փոփոխության մասին: Հիվանդանոցը կարող է նաև օգնել հիվանդին՝ հանրային ծրագրում փոխելու իր իրավասությունը, ընտանեկան եկամտի կամ ապահովագրության կարգավիճակում որևէ փոփոխություն առաջացման դեպքում, պայմանով, որ հիվանդը հիվանդանոցին տեղեկացնի իր իրավասության կարգավիճակի ցանկացած նման փոփոխության մասին:

WH-ը կհիշեցնի հիվանդին, որ իրենից պահանջվում է տեղեկացնել հիվանդության և գործող ծրագրի մասին, որից իրենք օգնություն են ստանում (օրինակ ՝ MassHealth, Connector, կամ Health Safety Net), ընտանեկան եկամտի փոփոխության հետ կապված ցանկացած տեղեկատվության մասին կամ, եթե դրանք ապահովագրական հատուցման մաս են կազմում, որը կարող է ծածկել հիվանդանոցի կողմից մատուցվող ծառայությունների գինը: Եթե կա որևէ երրորդ կողմ (ինչպիսին է, օրինակ, տան կամ մեքենայի ապահովագրությունը, բայց չսահմանափակվելով դրանով), որը պատասխանատու է դժբախտ պատահարի կամ այլ միջադեպի պատճառով խնամքի ծախսերը հոգալու համար, հիվանդը կաշխատի հիվանդանոցի կամ գործող ծրագրի հետ (ներառյալ ՝ բայց չսահմանափակվելով MassHealth-ը, Connector-ը կամ Health Safety Net-ը) այդպիսի ծառայությունների համար վճարված կամ չվճարված գումարը գանձելու իրավունքը փոխանցելու համար:

WH-ը հիվանդին կտեղեկացնի Health Safety Net-ին գրասենյակին կամ MassHealth գործակալությանը ծանուցելու պարտավորության մասին՝ վթարի ենթարկվելու, հիվանդության, վնասվածքի կամ այլ կորուստի դեպքում, որը կարող է հանգեցնել դատական կամ ապահովագրական հայցի: Նման դեպքերում հիվանդը պետք է.

I. Փոխհատուցման հայց ներկայացնի, եթե առկա է
II. Հահամաձայնվի բավարարել M.G.L. c.118E-ի բոլոր պահանջները, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝
   - Health Safety Net գրասենյակին վերապահել երրորդ կողմի դեմ ցանկացած հայցի կամ այլ վարույթի հասույթից ստացված Health Safety Net վճարմանը հավասար գումարի վերականգնման իրավունքը:
   - Տեղեկատվություն տրամադրի հայցի կամ որևէ այլ դատական վարույթի վերաբերյալ և լիովին համագործակցի Health Safety Net-ի գրասենյակի կամ նրա կողմից նշանակված անձի հետ, եթե Health Safety Net-ի գրասենյակը չորոշի, որ համագործակցությունը չի լինի շահեկան կամ կհանգեցնի հիվանդի լուրջ վնասի կամ հուզական խանգարումների:
   - Ցանկացած հայցադիմում, քաղաքացիական հայց կամ այլ դատական վարույթ ներկայացնելու օրվանից տասը օրվա ընթացքում գրավոր ծանուցի Health Safety Net-ին կամ MassHealth գործակալությանը, և

Փոխհատուցի Health Safety Net-ին երրորդ կողմից ստացված գումարներից, որոնք տրամադրվել են մատուցվող իրավասու ծառայությունների դիմաց՝ դժբախտ պատահարի օրը կամ Health Safety Net-ի կողմից վճարվելու նպատակով ցածր եկամուտ ունեցող հիվանդ դառնալուց հետո, պայմանով, որ միայն Health Safety Net-ի տրամանդրած վճարները, նախատեսված դժբախտ պատահարի կամ այլ միջադեպի համար, կհատուցվեն:

բ) Հիվանդանոցի պարտականությունները.
WH-ը բոլոր ողջամիտ ջանքերը կգործադրի հավաքելու հիվանդի ապահովագրության հետ կապված և այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ հիվանդանոցի կողմից տրամադրվող առողջապահական խնամքի ծառայությունների ծածկույթը ստուգելու համար: Այդ ջանքերը կարող են առաջանալ հիվանդի՝ ծառայության ստանալու նպատակով հիվանդանոցում նախնական գրանցման կամ ցանկացած այլ ժամանակ: Բացի այդ, հիվանդանոցը ծառայություններ մատուցելուց հետո հիվանդին կամ հիվանդի երաշխավորին ուղարկվող հաշիվ-ապրանքագրերում կտեղեկացնի ծածկույթի հնարավոր տարբերակների առկայության մասին՝ հասանելի հանրային օգնության կամ հիվանդանոցի ֆինանսական օգնության ծրագրի միջոցով, ներառյալ ՝ MassHealth-ի ծածկույթը, Health Connector-ի կողմից կառավարվող բոնուսային վճարման ծրագիրը, երեխաների բժշկական ապահովագրության ծրագիրը, Health Safety Net-ը կամ Health Safety Net-ի բժշկական խնդիրների աջակցության ծրագիրը: Բացի այդ, հիվանդանոցը նաև իր պատշաճ ստուգումը կիրականացնի գոյություն ունեցող պետական կամ մասնավոր ֆինանսական ստուգման համակարգերի միջոցով՝ պարզելու, թե արդյոք այն ի վիճակի է սահմանել հիվանդի իրավասության կարգավիճակը պետական կամ մասնավոր ապահովագրական ծածկույթի համար: Հիվանդանոցը կփորձի նման տեղեկատվություն հավաքել մինչև ոչ շտապ և անհետաձգելի առողջապահական ծառայություններ մատուցելը: Հիվանդանոցը կհետաձգի այս տեղեկատվությունը ստանալու ցանկացած փորձ, քանի դեռ հիվանդը ստանում է շտապ բուժօգնություն կամ անհետաձգելի բժշկական խնամք:

WH-ի ստուգումը (due diligence) կներառի, չսահմանափակվելով, հիվանդի ապահովագրության կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն հայցելը և հասանելի պետական կամ մասնավոր ապահովագրության տվյալների բազաների ստուգումը: WH-ը կձգտի վճարումներ ստանալ երրորդ կողմից՝բոլոր ծածկված ծառայությունների դիմաց և կհամապատասխանի ապահովագրողի հաշիվ ներկայացնելու և լիազորության պահանջներին: WH-ը կբողոքարկի ցանկացած մերժված հայց, երբ ծառայությունը ենթակա է ամբողջությամբ կամ մասամբ վճարման հայտնի երրորդ կողմի ապահովագրական ընկերության կողմից, որը կարող է պատասխանատու լինել հիվանդի խնամքի ծախսերի համար: Հնարավորության դեպքում, WH-ը կօգնի հիվանդին բողոքարկել մերժումները կամ այլ անբարենպաստ վճիռները իրենց ապահովագրական ծրագրի միջոցով՝գիտակցելով, որ ապահովագրության ծրագիրը հաճախ պահանջում է, որպեսզի բողոքարկումները կատարվեն հիվանդի կողմից: Երբ հիվանդի գրանցման կամ ընդունարանի անձնակազմը տեղեկանում է հիվանդի կողմից, նրանք նաև պետք է աշխատեն հիվանդի հետ, որպեսզի ապահովեն անհրաժեշտ տեղեկատվության փոխանցումը համապատասխան հանրային ծրագրերին, ինչպիսիք են ընտանիքի եկամտի կամ ապահովագրության կարգավիճակի ցանկացած փոփոխություն, ներառյալ ցանկացած դատական հայց կամ ապահովագրական հայց, որը կարող է ծածկել հիվանդանոցի կողմից մատուցվող ծառայությունների արժեքը:

Եթե հիվանդը կամ երաշխավորը/խնամակալը ի վիճակի չեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, և հիվանդը համաձայնություն է տալիս, հիվանդանոցը խելամիտ ջանքեր կգործադրի լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կապվելով հարազատների, ընկերների, երաշխավորի/խնամակալի և (կամ) այլ համապատասխան երրորդ անձանց հետ:

WH-ի ստուգման պատշաճ ջանքերը՝ուսումնասիրելու, թե արդյոք կարող են երրորդ անձի ապահովագրությունը կամ այլ միջոցներ պատասխանատու լինել հիվանդանոցի կողմից մատուցվող ծառայությունների արժեքի համար, ներառում են, չեն սահմանափակվում, հիվանդի կողմից հայցերի արժեքը ծածկելու համապատասխան քաղաքականության առկայության հաստատումը, այդ թվում՝ (1) ավտոմոբիլային տրանսպորտի կամ տան սեփականատիրոջ պատասխանատվության քաղաքականությունը, (2) դժբախտ պատահարներից կամ անձնական վնասվածքներից պաշտպանվելու քաղաքականությունը, (3) աշխատողների նպաստի ծրագրերը և (4) ուսանողների ապահովագրության քաղաքականությունները, ի թիվս այլոց:

Եթե հիվանդանոցը ի վիճակի է ճանաչել պատասխանատու երրորդ կողմին կամ վճարում է ստացել երրորդ կողմից կամ այլ միջոցներից (ներառյալ մասնավոր ապահովագրողից կամ այլ պետական ծրագրից), հիվանդանոցը այդ մասին հաշվետվությունը կներկայացնի գործող ծրագրին և կփոխհատուցի երրորդ կողմից կամ այլ միջոցներից վճարված ցանկացած հայց, եթե համապատասխանում է ծրագրի հայցերի մշակման պահանջներին: Պետական աջակցության ծրագրերի համար, որոնք փաստացի վճարել են ծառայությունների արժեքը, հիվանդանոցը պարտավոր չէ երրորդ կողմի ծառայությունների ծածկույթի համար ապահովել հիվանդի իրավասությունը: Այս դեպքերում հիվանդը պետք է տեղյակ լինի, որ համապատասխան պետական ծրագիրը կարող է փորձել փոխհատուցում պահանջել հիվանդին մատուցվող ծառայությունների արժեքի դիմաց:

Բ. Հիվանդանոցային հաշվի դուրս գրման և հավաքագրման պրակտիկա

WH-ը ունի հաստատուն և հետևողական գործընթաց՝ հիվանդներին ներկայացված պահանջները ներկայացնելու և հավաքագրելու համար՝ անկախ նրանց ապահովագրական կարգավիճակից: Մասնավորապես, եթե հիվանդը ունի ընթացիկ չվճարված մնացորդ, որը կապված է հիվանդին մատուցվող ծառայությունների հետ և չի ծածկվում պետական կամ մասնավոր ծածկույթի տարբերակով, հիվանդանոցը կհետևի հետևյալ խելամիտ հավաքագրման/հաշվի դուրս գրման ընթացակարգերին, որոնք ներառում են.

- Հիվանդին կամ հիվանդի անձնական ֆինանսական պարտավորությունների համար պատասխանատու կողմին ուղարկված նախնական հաշիվը. նախնական հաշիվը կներառի ֆինանսական աջակցության մատչելիության մասին տեղեկատվություն (ներառյալ, բայց չսահմանափակվելով, MassHealth-ը, Health Connector-ի կողմից կառավարվող բոնուսային վճարման ծրագիրը, երեխաների բժշկական ապահովագրության ծրագիրը, Health Safety Net-ը կամ Health Safety Net-ի բժշկական խնդիրների աջակցության ծրագիրը) ծածկելու հիվանդանոցի հաշվիվը:
- Հետագա հաշիվները, հեռախոսազանգերը, հավաքագրման նամակները, անձնական ծանուցումները, համակարգչային ծանուցումները կամ ծանուցման ցանկացած այլ եղանակ, որոնք համարվում են իրական փորձ կապվելու չվճարված հաշվի համար պատասխանատու կողմի հետ, որը կներառի նաև տեղեկություններ այն մասին, թե ինչպես կարող է հիվանդը կապվել հիվանդանոցի հետ, եթե ֆինանսական օգնության կարիք ունենա
- Հնարավորության դեպքում՝ պարտավորության համար պատասխանատու կողմին կամ ճիշտ հասցեն գտնելու այլընտրանքային փորձերի ապացույցները, ինչպես օրինակ՝ «սխալ հասցե» կամ «չհասցվող» նշումները փոստային ծառայության կողմից վերադարձված հաշիվների վրա:
- Վավերացված փոստով վերջնական ծանուցում ուղարկել չապահովագրված հիվանդներին (ովքեր ընդգրկված չեն այնպիսի ծրագրերում, ինչպիսիք են Health Safety Net-ը և MassHealth-ը), ում անհետաձգելի վատ պարտքը միայն արտակարգ իրավիճակների մակարդակի ծառայություններին համար $1000-ից ավելի է, որտեղ ծանուցումները չեն վերադարձվել որպես «սխալ հասցե» կամ «չհասցվող», նաև ծանուցել հիվանդներին հասանելի ֆինանսական աջակցության մասին:
- Ծառայության մատուցման պահից 120 օրվա ընթացքում ձեռնարկված հաշվի դուրս գրման կամ հավաքագրման գործողությունների շարունակական փաստաթղթավորումը պահպանվում է և հասանելի է համապատասխան դաշնային և/կամ նահանգային ծրագրին՝այդ ջանքերը ստուգելու համար: Եվ
- ստուգել Մասաչուսեթսի իրավասության ստուգման համակարգը (EVS)՝ համոզվելու համար, որ հիվանդը ցածր եկամուտ ունեցող հիվանդ չէ և դիմում չի ներկայացրել MassHealth՝ Health Connector-ի կողմից կառավարվող բոնուսային վճարման ծրագրի ծածկույթի, երեխաների բժշկական ապահովագրության ծրագրի կամ Health Safety Net ծածկույթի համար՝ նախքան Health Safety Net-ի գրասենյակ պարտքերի վատ ծածկույթի համար պահանջներ ներկայացնելը:

- Բոլոր այն հիվանդներին, ովքեր ընդգրկված են հանրային աջակցության ծրագրում, WH-ը հաշիվ կներկայացնի միայն նրանց համավճարների, համապահովագրություն կամ չհատուցվող գումարների համար, ինչպես նշված է գործող պետական կանոնակարգերում և որը կարող է հետագայում նշված լինել Medicaid-ի պետական կառավարման տեղեկատվական համակարգում

WH-ը կձգտի որոշակի գումար տրամադրել այն հիվանդների համար, ովքեր Մասաչուսեթսի նահանգի հանրային աջակցության ծրագրում ընդգրկվելու իրավունք չունեն, օրինակ՝ արտագնա բնակիչները, բայց ովքեր այլ կերպ կարող են բավարարել պետական աջակցության ծրագրի իրավասության չափանիշները: WH-ը կտեղեկացնի այս հիվանդներին, եթե այդպիսի լրացուցիչ միջոցներ հասանելի լինեն հիվանդի եկամտի և այլ չափանիշների հիման վրա, ինչպես նշված է հիվանդանոցի ֆինանսական օգնության քաղաքականության մեջ: Հիվանդները կարող են նաև իրավասու լինել WH-ի ֆինանսական օգնության, համաձայն WH-ի ֆինանսական օգնության քաղաքականության:

Գ. Հավաքագրման գործունեությունից ազատված խումբ

Հիվանդների հետևյալ խմբերն ազատվում են հավաքագրման կամ հաշվի դուրսգրման ընթացակարգերից՝ համաձայն պետական կանոնակարգերի և քաղաքականության. Պետական առողջության ապահովագրության ծրագրում ընդգրկված հիվանդները, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ MassHealth-ը, տարեցների, հաշմանդամների և երեխաների շտապ օգնությունը (EAEDC), երեխաների բժշկական ապահովագրության պլան (CMSP), եթե MAGI-ի եկամուտը հավասար է կամ պակաս FPL-ի 300% -ից, ցածր եկամուտ ունեցող հիվանդները՝ հաստատված MassHealth-ի և Health Safety Net-ի կողմից՝ ներառյալ MAGI ընտանեկան եկամտով կամ Health Safety Net բժշկական խնդիրներով FPL- ի 150.1-ից 300% -ի սահմաններում ընտանեկան հաշվարկելի եկամուտներ ունեցող և Health Safety Net-ի բժշկական խնդիրների աջակցության ծրագրուն ընդգրկված հիվանդները հետևյալ բացառություններով՝

ա. WH-ը կարող է հավաքագրման գործողություն կիրառել վերոհիշյալ ծրագրերում ընդգրկված ցանկացած հիվանդի նկատմամբ՝ նրանց պահանջվող համավճարների և չհատուցվող գումարների համար, որոնք սահմանված են յուրաքանչյուր հատուկ ծրագրի կողմից

բ. WH-ը կարող է նաև նախաձեռնել հաշիվների դուրս գրում կամ հավաքագրում այն հիվանդի համար, ով պնդում է, որ ինքը ֆինանսական աջակցության ծրագրի մասնակից է, որը ծածկում է հիվանդանոցային ծառայությունների ծախսերը, բայց չի տրամադրում այդ մասնակցության ապացույց: Ստանալով բավարար ապացույց, որ հիվանդը ֆինանսական աջակցության ծրագրի մասնակից է, (ներառյալ ստորագրված դիմումը) WH-ը կդադարեցնի իր հաշիվների դուրսգրման կամ հավաքագրման գործունեությունը

գ. WH-ը կարող է շարունակել մատուցած ծառայությունների դիմաց ցածր եկամուտ ստացող ցանկացած հիվանդի նկատմամբ հավաքագրման գործողությունը մինչև նրա համապատասխան կարգավիճակի հաստատումը, պայմանով, որ ներկայիս ցածր եկամուտ ունեցող հիվանդի կարգավիճակը դադարեցված է, ժամկետանց է կամ այլ կերպ հաստատված չէ պետության իրավասության ստուգման համակարգի կամ Medicaid-ի կառավարման տեղեկատվության համակարգի մեջ: Այնուամենայնիվ, այն բանից հետո, երբ հիվանդի իրավասությունը հաստատվի և նա ընդգրկվի MassHealth-ում, Health Connector-ի կողմից կառավարվող բոնուսային վճարման ծրագրում, երեխաների բժշկական ապահովագրության ծրագրում կամ Health Safety Net-ի բժշկական խնդիրների աջակցության ծրագրում, WH-ը կդադարեցնի նախքան իրավասության հաստատման սկիզբը տրամադրված ծառայությունների համար հավաքագրման գործունեությունը (բացառությամբ որևէ համավճարների և չհատուցվող գումարներ):

դ. WH-ը կարող է հավաքագրման գործողություններ կիրառել վերոհիշյալ ծրագրերին մասնակցող հիվանդներից յուրաքանչյուրի նկատմամբ՝չծածկված ծառայությունների համար, որոնց համար հիվանդը համաձայնել է պատասխանատվություն կրել, պայմանով, որ հիվանդանոցը ձեռք կբերի հիվանդի նախնական գրավոր համաձայնությունը՝ այդ ծառայության (ծառայությունների) դիմաց հաշիվի դուրսգրման համար: Այնուամենայնիվ, նույնիսկ այս

պայմաններում WH-ը հիվանդին հաշիվ չի ներկայացնի բժշկական սխալների կամ հիվանդի առաջնային ապահովագրողի կողմից վարչական կամ բիլինգային սխալի պատճառով մերժված պահանջների համար:

Ե. Հիվանդի խնդրանքով WH-ը կարող է հաշիվ ներկայացնել ցածր եկամուտ ունեցող հիվանդին, որպեսզի թույլ տա նրան բավարարել CommonHealth-ի մեկանգամյա ֆրանշիզայի պահանջներին, ինչպես նկարագրված է 130 CMR 506.009-ում:

Դ. Անհետաձգելի վատ պարտք

WH-ը կներկայացնի անհետաձգելի վատ պարտքի հայց, ինչպես սահմանված է 101 CMR 613.06 (2) -ում: WH-ը չի ներկայացնի հայց չհատուցվող գումարների կամ համապատասխանությունների համար, որի պատասխանատվությունը կրում է ապահովագրված հիվանդը կամ ցածր եկամուտ ունեցող հիվանդը:

ա. Հիվանդանոցային ծառայությունների համար- Նախքան հիվանդի դուրսգրումը կամ անհրաժեշտության դեպքում `դուրս գրման պահին WH-ի ֆինանսական խորհրդատուները ողջամիտ ջանքեր կգործադրեն հիվանդի կամ երաշխավորի վճարման պատասխանատվությունը որոշելու համար ֆինանսական տեղեկատվություն ստանալու հարցում: Եթե հիվանդը կամ երաշխավորը/խնամակալը ի վիճակի չեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, և հիվանդը համաձայնություն տա, հիվանդանոցը ջանքեր կգործադրի լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կապվելու հարազատների, ընկերների, երաշխավորի/խնամակալի և/կամ այլ համապատասխան երրորդ անձանց հետ:

բ. Շտապ և ամբուլատոր ծառայությունների համար WH-ի գրանցման անձնակազմը հնարավորինս շուտ ողջամիտ ջանքեր կգործադրի ֆինանսական տեղեկատվություն ստանալու համար՝ հիվանդի կամ երաշխավորի վճարման պատասխանատվությունը որոշելու համար:

Ե. Հավաքագրման արտակարգ միջոցառումներ

ա. WH-ը չի ձեռնարկի որևէ «արտահերթ հավաքագրման գործողություն», քանի դեռ ողջամիտ ջանքերի չի կիրառել և չի հետևել հիվանդի ֆինանսական կարգավիճակի և ֆինանսական օգնության իրավասությունը որոշելու համար անհրաժեշտ այլ տեղեկատվության ողջամիտ ուսումնասիրությանը, որը կսահմանի, որ հիվանդը ֆինանսական օգնության իրավունք ունի և ազատված է սույն վարկային և հավաքագրման քաղաքականության շրջանակներում որևէ հավաքագրման կամ բիլինգային գործունեությունից: Գլխավոր ֆինանսական տնօրենը վերջնական լիազորություն ունի որոշելու, որ WH-ը ողջամիտ ջանքեր է գործադրել՝ պարզելու, թե արդյոք WH-ի ֆինանսական աջակցության քաղաքականության համաձայն ֆիզիկական անձը իրավասու է ֆինանսական օգնության, և, հետևաբար, կարող է հավաքագրման արտակարգ միջոցառումներ ձեռնարկել այդ անհատի նկատմամբ: WH-ը կպահի ցանկացած և բոլոր փաստաթղթերը, որոնք օգտագործվել են այս որոշման մեջ՝ համաձայն հիվանդանոցի գրառումների պահպանման կիրառելի քաղաքականության:

բ. WH-ը կընդունի և կմշակի ֆինանսական օգնության մասին դիմումը համաձայն հիվանդի կողմից ներկայացված ֆինանսական աջակցության քաղաքականության ողջ «դիմումի ժամանակահատվածի» համար: «Դիմումի ժամանակահատվածը» սկսվում է խնամքի տրամադրման օրվանից և ավարտվում է խնամքի համար առաջին վճարման հաշիվը տրամադրելու օրվանից հետո 240-րդ օրը, հետևելով հատուկ լրացուցիչ պահանջներին:

Դիմելու ժամկետը չի ավարտվում ավելի վաղ, քան հիվանդանոցից հիվանդին ստորև նկարագրված 30-օրյա ծանուցումը տրամադրելուց հետո 30-րդ օրը: Այն դեպքում, երբ հիվանդը, որը ենթադրաբար համարվել է իրավասու ոչ այնքան մեծ ֆինանսական աջակցության համար այս աջակցության քաղաքականության շրջանակներում, դիմումը չի ավարտվի նախքան հիվանդի՝ ավելի մեծ ֆինանսական օգնության դիմելու խելամիտ ժամկետի ավարտը, ինչպես նկարագրված է ստորև:

գ. Հավաքագրման արտակարգ միջոցառումները ներառում են՝

i.Հիվանդի պարտքի վաճառքը մեկ այլ կողմի (բացառությամբ այն դեպքերի, երբ ստորև նշված

հատուկ պահանջները բավարարված են)

ii. վարկային գործակալություններին կամ վարկային բյուրոներին հաշվետվություն ներկայացնելը

iii. Վճարումը հետաձգելը, մերժելը կամ պահանջելը մինչ անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելը, բժշկական անհրաժեշտ խնամքի ապահովումը՝ հիվանդանոցի ֆինանսական օգնության քաղաքականության շրջանակներում նախկինում ծածկված մեկ կամ մի քանի հաշիվների չվճարման պատճառով (որը համարվում է նախկինում տրամադրված խնամքի համար հավաքագրման արտակարգ միջոցառում)

iv. Գործողություններ, որոնք պահանջում են իրավական կամ դատական գործընթաց, ներառյալ.

1) Հիվանդի գույքի վրա արգելանքը դնելը
2) Անշարժ գույքի բռնագանձումը
3) Բանկային հաշվի կամ որևէ այլ անձնական գույքի կցելը կամ առգրավելը
4) Հիվանդի նկատմամբ քաղաքացիական գործ հարուցելը
5) Հիվանդի ձերբակալության պատճառ հանդիսանալը
6) Հիվանդին բերման ենթարկելու պատճառ հանդիսանալը
7) Հիվանդի աշխատավարձի բռնագանձումը

v. WH-ը այլ կողմին հիվանդի պարտքի վաճառքը կդիտարկի որպես արտահերթ հավաքագրման գործողություն, քանի դեռ հիվանդանոցը պարտադիր գրավոր համաձայնագիր չի կնքել պարտքի գնորդի հետ, համաձայն որի (i) գնորդին արգելվում է իրականացնել հավաքագրման արտակարգ գործողություններ խնամքի վճար ստանալու համար, (ii) գնորդին արգելվում է գանձել պարտքի տոկոսները ավելի բարձր տոկոսադրույքով, քան կիրառվող IRS ենթավճարի տոկոսադրույքը. (iii) պարտքը վերադարձվում է հիվանդանոցին կամ հետ է կանչվում այն բանից հետո, երբ որոշվում է, որ հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության. (iv) եթե որոշվում է, որ հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության, և պարտքը չի վերադարձվում կամ հետ չի կանչվում հիվանդանոցից, գնորդից պահանջվում է պահպանել ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն, որպեսզի հիվանդը գնորդին ավելի շատ գումար չվճարի, քան անձամբ պատասխանատու է վճարել ֆինանսական օգնության քաղաքականության ներքո:

vi. Հավաքագրման արտակարգ միջոցառումները ներառում են այնպիսի գործողություններ, որոնք իրականացվում են ցանկացած հիվանդից, ով ընդունել է կամ պետք է ընդունի խնամքի համար վճարելու պատասխանատվությունը, բուժման դիմաց վճար ստանալու համար:

դ. WH-ը ձեռնպահ կմնա հիվանդի դեմ հավաքագրման արտակարգ միջոցառումներ նախաձեռնելուց առնվազն 120 օր ժամկետով այն օրվանից, երբ հիվանդանոցը տրամադրի խնամքի համար ներկայացված առաջին վճարման հաշիվը բացառությամբ, երբ հատուկ պահանջները վերաբերում են բժշկական անհրաժեշտ խնամքը հետաձգելուն կամ մերժմանը՝ չվճարելու պատճառով, ինչպես նկարագրված է ստորև:

ե. Վերը նկարագրված 120-օրյա ժամկետում հավաքագրման արտակարգ միջոցառումներ նախաձեռնելուց զերծ մնալուց բացի, WH-ը ձեռնպահ կմնա հավաքագրման որևէ արտակարգ միջոցառումներ նախաձեռնելուց առնվազն 30 օր ժամկետով՝ հիվանդին իր ֆինանսական օգնության քաղաքականության մասին հետևյալ միջոցներով տեղեկացնելուց հետ՝ հիվանդանոցը (i) հիվանդին տրամադրում է գրավոր ծանուցում, որը ցույց է տալիս, որ իրավասու հիվանդների համար հասանելի է ֆինանսական աջակցություն, որը սահմանում է հավաքագրման արտակարգ միջոցառումներ, որոնք հիվանդանոցը (կամ այլ լիազորված կողմ) մտադիր է նախաձեռնել խնամքի համար վճար ստանալու համար և որ նշում է վերջնաժամկետ, որից հետո կարող են սկսվել հավաքագրման արտակարգ միջոցառումները գրավոր ծանուցման տրամադրելուց հետո 30 օրվանից ոչ շուտ (ii) հիվանդին տրամադրում է ֆինանսական օգնության քաղաքականության պարզ լեզվով ամփոփագիր և (iii) ողջամիտ ջանքեր է գործադրում հիվանդին բանավոր տեղեկացնելու ֆինանսական օգնության քաղաքականության մասին և այն մասին, թե ինչպես

հիվանդը կարող է օգնություն ստանալ ֆինանսական օգնության քաղաքականության դիմումի գործընթացում, բացառությամբ, երբ հատուկ բժշկական պահանջները հետաձգելու կամ մերժելու համար կիրառվում են հատուկ պահանջներ, ինչպես նկարագրված է ստորև:

զ. WH-ը կբավարարի հետևյալ հատուկ պահանջները այն դեպքում, երբ այն հետաձգի կամ մերժի խնամքը նախկինում ֆինանսական օգնության իրավասու խնամքի դիմաց չվճարելու պատճառով: Հիվանդանոցը կարող է տրամադրել վերը նկարագրված 30 օրից պակաս ժամկետով ծանուցումը, եթե այն հիվանդին տրամադրում է ֆինանսական օգնության հայտի ձև և գրավոր ծանուցում այն մասին, որ իրավասու հիվանդների համար հասանելի է ֆինանսական օգնություն: Գրավոր ծանուցման մեջ նշվում է վերջնաժամկետը, որից հետո հիվանդանոցն այլևս չի ընդունի և չի քննարկի ֆինանսական օգնության դիմումը, որը կլինի ոչ շուտ, քան դիմումի ժամկետի ավարտը կամ գրավոր ծանուցման առաջին անգամ տրամադրելու օրվանից 30 օր անց: Եթե հիվանդը դիմում ներկայացնի մինչև վերջնաժամկետը, հիվանդանոցը արագ կարգով կսկսի գործընթացը:

է. Եթե հայտը ներկայացնելու ընթացքում հիվանդը հիվանդանոցի ֆինանսական աջակցության քաղաքականության ներքո ֆինանսական օգնության ամբողջական կամ թերի դիմում ներկայացնի, WH-ը կկասեցնի խնամքի վճար ստանալու համար հավաքագրման ցանկացած արտակարգ միջոցառում: Նման դեպքում հիվանդանոցը չի նախաձեռնի և չի ձեռնարկի հետագա գործողություններ նախկինում սկսված հավաքագրման արտակարգ միջոցառումների վերաբերյալ, քանի դեռ կամ (i) հիվանդանոցը չի պարզել՝ արդյոք հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության՝ ֆինանսական օգնության քաղաքականության ներքո, կամ (ii) ֆինանսական օգնության թերի դիմումի դեպքում, հիվանդը չի կարողացել պատասխանել լրացուցիչ տեղեկատվության և/կամ փաստաթղթերի վերաբերյալ հարցերին ողջամիտ ժամկետում: WH-ը նաև հետագա գործողություններ կձեռնարկի՝ կախված դիմումի ամբողջական կամ թերի լինելուց, ինչպես նկարագրված է ստորև:

ը. Դիմելու ժամանակահատվածում հիվանդի կողմից ֆինանսական օգնության ամբողջական դիմում ներկայացնելու դեպքում WH-ը որոշում կկայացնի՝արդյոք հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության: Եթե հիվանդանոցը որոշի, որ հիվանդը անվճար խնամքի օգնությունից այլ աջակցության իրավունք ունի, հիվանդանոցը (i) հիվանդին կտրամադրի հաշվեկշիռ, որում նշված է այն գումարի չափը, որը հիվանդը պարտք է խնամքի համար որպես ֆինանսական օգնության իրավունք ունեցող հիվանդ և նկարագրված է, թե ինչպես հիվանդը կարող է տեղեկատվություն ստանալ խնամքի համար սովորաբար գանձվող գումարների վերաբերյալ,
(ii) ձեռնարկել բոլոր միջոցները՝ չեղարկելու հավաքագրման ցանկացած արտակարգ միջոցառում (բացառությամբ պարտքի վաճառքի կամ նախքան բժշկական անհրաժեշտ խնամք տրամադրելը հիվանդի կողմից նախկինում ֆինանսական իրավասության սահմաններում ստացած խնամքի դիմաց չվճարելու համար հաշիվների հետաձգումը կամ մերժումը), որը կիրառվել է հիվանդի նկատմամբ՝ խնամքի դիմաց վճար ստանալու համար:
Հավաքագրման արտակարգ միջոցառումները չեղարկելու միջոցները կներառեն ցանկացած դատավճռի բեկանելու, ցանկացած գրավադրման կամ կալանքի վերացման և հիվանդի վարկային հաշվետվությունից ցանկացած անբարենպաստ տեղեկատվություն, որը հաղորդվել է սպառողների հաշվետվությունների գործակալությանը կամ վարկային բյուրոյին, հանելու միջոցներ:

թ. Դիմելու ժամանակահատվածում հիվանդի կողմից ֆինանսական օգնության թերի դիմում ներկայացնելու դեպքում հիվանդանոցը հիվանդին կտրամադրի գրավոր ծանուցում, որը նկարագրում է ֆինանսական օգնության քաղաքականության ներքո պահանջվող լրացուցիչ տեղեկություններ և/կամ փաստաթղթեր և պարունակում են կոնտակտային տվյալներ:

ժ. WH-ը կարող է ենթադրյալ որոշում կայացնել այն մասին, որ հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության ֆինանսական օգնության քաղաքականության ներքո՝ հիմնվելով այլ տեղեկատվության վրա քան տրամադրվել է հիվանդի կողմից կամ իրավասության նախնական որոշման հիման վրա: Այն դեպքում, երբ հիվանդը, որը ենթադրաբար համարվել է իրավասու ոչ մեծ ֆինանսական աջակցության համար՝ այս աջակցության քաղաքականության

շրջանակներում, հիվանդանոցը (i) կտեղեկացնի հիվանդին ենթադրյալ իրավասության որոշման հիմքի և ֆինանսական աջակցության քաղաքականության շրջանակներում ավելի մեծ ֆինանսական աջակցության դիմելու եղանակի մասին: (ii) Կտրամադրի հիվանդին ողջամիտ ժամանակահատված՝ նախքան պարտքը վերադարձնելու համար հավաքագրման արտակարգ միջոցառումներ նախաձեռնելը, ավելի մեծ աջակցության դիմելու համար և (iii) եթե հիվանդը դիմելու ժամանակահատվածում ամբողջական դիմում ներկայացնի ավելի մեծ ֆինանսական օգնություն ստանալու համար, կորոշի՝թե արդյոք հիվանդը իրավասու է ավելի մեծ զեղչի:

ի. WH-ը չի բռնագանձի ցածր եկամուտ ունեցող հիվանդի կամ նրա երաշխավորի աշխատավարձը կամ գրավի տակ չի դնի ցածր եկամուտ ունեցող հիվանդի կամ նրա երաշխավորի անձնական բնակարանը կամ մեքենան, եթե (1) հիվանդանոցը կարողանա ապացուցել, որ հիվանդը կամ նրա երաշխավորը վճարելու հնարավորություն ունի, (2) հիվանդը/երաշխավորը չի արձագանքել հիվանդանոցի տեղեկատվություն տրամադրելու խնդրանքին կամ հիվանդը/երաշխավորը հրաժարվել է համագործակցել հիվանդանոցի հետ՝ ֆինանսական աջակցության հասանելի ծրագրի որոնման հարցում, և (3) գրավադրման նպատակով, այն հաստատվել է հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի կողմից՝ անհատական հիմունքներով:

լ. WH-ը և նրա գործակալները չպետք է շարունակեն սնանկության վարույթի անդամ հանդիսացող հիվանդի հետ կապված հավաքագրումը կամ բիլինգային ջանքերը, բացառությամբ այն բանի, որ համապատասխան կարգով ապահովեն իր՝ որպես պարտատիրոջ իրավունքները (նմանատիպ գործողություններ կարող են ձեռնարկվել նաև գործող պետական աջակցության ծրագրի կողմից, որը վճարել է ծառայությունների համար): Հիվանդանոցը և նրա գործակալները նաև տոկոսավճար չեն գանձի ժամկետանց պարքի համար ցածր եկամուտ ունեցող կամ հիվանդանոցի ներքին ֆինանսական օգնության ծրագրի միջոցով ապահովագրության չափանիշներին համապատասխանող հիվանդներից:

խ. WH-ը շարունակում է բիլինգի գործող պահանջների պահպանումը և հետևում է կիրառելի պետական և դաշնային պահանջներին՝ կապված հատուկ ծառայությունների չվճարման հետ, որոնք արդյունք էին կամ ուղղակիորեն առնչվում էին զեկուցում պահանջող լուրջ իրադարձությանը (SRE), այդ իրադարձության (SRE-ի) ճշգրտմանը, այդ իրադարձությունից բխող հետագա բարդությանը կամ նույն հիվանդանոցում SRE-ի հետ կապված ծառայություններ ստանալու նպատակով կրկնակի հոսպիտալացմանը: Այն SRE -ները, որոնք տեղի չեն ունենում հիվանդանոցում, բացառվում են չվճարման որոշումից, քանի դեռ բուժվող հաստատությունը և SRE -ի համար պատասխանատու հաստատությունը չունեն ընդհանուր սեփականություն կամ չեն պատկանում նույն հաստատությանը: Հիվանդանոցը նաև չի պահանջում վճար Health Safety Net ծրագրի միջոցով ճանաչված ցածր եկամուտ ունեցող հիվանդից, ումպահանջները ի սկզբանե մերժվել են ապահովագրության ծրագրի կողմից՝ հիվանդանոցի հաշվի դուրսգրման մեջ թույլ տված վարչական սխալի պատճառով:

Զ. Արտաքին հավաքագրման գործակալություններ

WH-ը կարող է պայմանագիր կնքել հավաքագրման արտաքին գործակալությունների հետ՝որոշակի հաշիվների հավաքագրման գործում օժանդակելու համար, ներառյալ հիվանդի կողմից վճարվելիք գումարները, որոնք չեն մարվել շարունակական հավաքագրման գործողությունների 120 օր-ից հետո: Հիվանդանոցը կարող է նաև պարտադիր պայմանագրեր կնքել հավաքագրման արտաքին գործակալությունների հետ: Պարտքի վաճառքը թույլատրող ցանկացած նման պայմանագիր, որը չի դիտարկվում որպես հավաքագրման արտակարգ միջոցառում, կհամապատասխանի վերը նկարագրված պահանջներին:

Բոլոր մյուս դեպքերում, եթե հիվանդանոցը վաճառում կամ փոխանցում է հիվանդի պարտքը մեկ այլ կողմի, ապա մյուս կողմի հետ պայմանագիրը կմշակվի այնպես, որպեսզի երաշխավորի հավաքագրման արտակարգ միջոցառումների բացառումը, քանի դեռ ողջամիտ ջանքեր չեն գործադրվել՝ պարզելու, թե արդյոք հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության, ներառյալ հետևյալը.

(i) եթե հիվանդը դիմում է ներկայացնում մինչև հայտի ժամկետի ավարտը, կողմը կասեցնում է հավաքագրման արտակարգ միջոցառումները,

(ii) եթե հիվանդը ֆինանսական աջակցության դիմում է ներկայացնում մինչև հայտի ժամկետի ավարտը և որոշվում է, որ իրավասու է ֆինանսական օգնության, ապա կողմը կհետևի ընթացակարգերին՝ երաշխավորելու համար, որ հիվանդը չվճարի կողմին և հիվանդանոցին ավելին, քան պարտավոր է վճարել ֆինանսական օգնության քաղաքականության ներքո և չեղարկի հավաքագրման ցանկացած արտակարգ միջոցառում,

(iii) եթե կողմը փոխանցում կամ վաճառում է պարտքը մեկ այլ կողմի, ապա կողմը կստանա գրավոր համաձայնագիր, որը բավարարում է վերոնշյալ բոլոր պահանջները: Հիվանդանոցի կողմից վարձված հավաքագրման բոլոր արտաքին գործակալությունները հիվանդին հնարավորություն կտան բողոք ներկայացնել և հիվանդանոց կուղարկեն հիվանդի նման բողոքների արդյունքները: Հիվանդանոցի կողմից վարձված բոլոր արտաքին հավաքագրման գործակալությունները հիվանդին հնարավորություն կտան բողոք ներկայացնել և հիվանդանոց կուղարկեն այդ բողոքների արդյունքները: Հիվանդանոցը պահանջում է, որպեսզի իր վարձած ցանկացած արտաքին հավաքագրման գործակալություն գործի պարտքերի հավաքագրման դաշնային և նահանգային պահանջներին համապատասխան:

Է. Կանխավճարներ և ապառիկներ

Համաձայն Մասաչուսետսի Health Safety Net-ի կանոնակարգերի, որոնք վերաբերում են այն հիվանդներին, ովքեր կամ (1) հաստատվել են որպես «ցածր եկամուտ ունեցող հիվանդ» կամ (2) որակավվել են իրավասու Health Safety Net-ի բժշկական խնդիրների աջակցության ծրագրին, WH-ը հիվանդին կտրամադրի տեղեկություններ կանխավճարների և վճարների ծրագրերի վերաբերյալ, որոնք հիմնված են հիվանդի փաստաթղթավորված ֆինանսական վիճակի վրա: Ցանկացած այլ ծրագիր հիմնված կլինի հիվանդանոցի սեփական ներքին ֆինանսական աջակցության ծրագրի վրա և չի տարածվի այն հիվանդների վրա, ովքեր վճարունակ են:

ա. Շտապ օգնության ծառայություններ

WH-ը չի պահանջի կանխավճարներ նախքան հոսպիտալացումը կամ բուժումը այն հիվանդներից, ովքեր շտապ օգնության ծառայությունների կարիք ունեն կամ համարվում են ցածր եկամուտ ունեցող հիվանդներ:

բ. Ցածր եկամուտ ունեցող հիվանդի կանխավճարներWH-ը կարող է ցածր եկամուտ ունեցող հիվանդներից կանխավճար պահանջել: Նման կանխավճարները կսահմանափակվեն նվազեցվող գումարի 20% -ով՝ մինչև 500 ԱՄՆ դոլար: Բոլոր մնացած մնացորդները ենթակա են վճարման՝ համաձայն ծրագրի պայմանների, որոնք սահմանված են 101 CMR 613.08 (1) (g) կետում:

գ. Health Safety Net-ի բժշկական խնդիրների աջակցության ծրագրի հիվանդների կանխավճարներ WH-ը կարող է Health Safety Net-ի բժշկական խնդիրների աջակցության ծրագրի հիվանդներից կանխավճարներ պահանջել: Կանխավճարները կսահմանափակվեն Health Safety Net-ի բժշկական խնդիրների աջակցության ծրագրի ներդրումի 20% -ով՝ մինչև 1000 ԱՄՆ դոլար: Բոլոր մնացած մնացորդները ենթակա են վճարման՝ համաձայն ծրագրի պայմանների, որոնք սահմանված են 101 CMR 613.08 (1) (g) կետում:

դ. Մասաչուսետսի Health Safety Net-ի ծրագրի շրժանակներում ցածր եկամուտ ունեցող հիվանդների վճարման պլաններ

Նախնական կանխավճարն իրականացնելուց հետո այն հիվանդներին, ում հաշվեկշիռը $1,000ԱՄՆ դոլար է կամ պակաս, կառաջարկվի առնվազն մեկ տարվա անտոկոս վճարման պլան ամսական $ 25-ից ոչ ավել նվազագույն վճարով: Այն հիվանդներին, ում հաշվեկշիռը $1,000ԱՄՆ դոլար է կամ ավել, նախնական կանխավճարն իրականացնելուց հետո կառաջարկվի առնվազն երկու տարվա անտոկոս վճարման պլան:

ե. Մասաչուսետսի Health Safety Net-ի ծրագրում ընդգրկված HSN մասնակի ցածր եկամուտ ունեցող հիվանդների վճարման պլաններ՝ արտոնագրված բուժհաստատություններում ստացած ծառայությունների համար

Բոլոր Health Safety Net-ի ծրագրում ընդգրկված մասնակի ցածր եկամուտ ունեցող հիվանդներից կգանձվի իրենց պարտավորությունների գումարի 100%-ը մինչ ամբողջական գումարի գանձումը: